

Կանոնագրութեան

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ԹԻՐ 48



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



J. W. WILKINSON

J. W. WILKINSON

J. W. WILKINSON

J. W. WILKINSON

J. W. WILKINSON

J. W. WILKINSON

J. W. WILKINSON

J. W. WILKINSON

J. W. WILKINSON

J. W. WILKINSON

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ ՀԱՆՐԱԿԻԺԱԳ HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԿԻՏԱԿ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 48 || 29 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ԲԱՐԻ ԱՂՋԻԿԸ

Ի՞նչ բարի է սա աղջիկ՝
Կանուխ ելեր դաս կ'ուսնի,
Ինքն ալ կարծես գեղեցիկ՝
Նուրբ կոկոն մ'է շուշանի:

Այսին վրայ գիրգ ու փափուկ՝
Վարդ մ'է բացուեր ծիրանի.
Ուր շողն այգուն խուսափուկ՝
Բիւր իմայֆով կը ծնի:

Առտո՛ւն՝ հագիւ կը հագուի՝
Երկինք կ'ուղղէ իր աչեր.
Սիրսն ալ՝ — խորան գորովի —
Տերն հրմայֆով է բացեր:

Կը լուացուի, կը սանձէ՝
Յակընթափող իր մազեր,
Ուր նի՛ւ մը կայ գոհարէ՝
Ջօն մայրիկին ժամասէր:

Գիրքերն ապա բեւին ճակ՝
Ուրախ՝ դրարոց կը սրանայ,
Մըսին մէջ շինջ ու յըսակ՝
Լընուլ լոյսի՝ մանանայ:

Հոն՝ ջանասէր ժիր մեղու՝

Մեղրի հիւքեր կը հաւքէ՝

Մինչեւ հոգին կը զեղու

Ամեն սեսակ ծաղիկէ :

Շողակ մ'է ան ակնաթով՝

Շուքն իր քաղին վարժասան.

Ընկերներուն զայն մասով՝

Վարժուհիներն ցոյց կուտան :

Իրկունն՝ համես ու ժրպտուն՝

Վարժասունեն տուն կուգայ ,

Ապրի՝ աղջիկն իմասուն՝

Մեր հիացման առարկայ :

ՄԿՐՏԻՉ Ա, ԹՈՊՐԵԱՆ

ԱՌԱՅՆԵՐ ՈՒ ԱՌԱԿՆԵՐ

(Շարունակութիւն 45րդ թիւէն)

La familiarité engendre le mépris. Ընտանեկանութենէ արհա. մարհանք կ'ծնանի :

Երբ մէկը իր ստորակարգելոց հետ ընտանեքար կ'վարուի, կը կ'դադրի անոնցմէ ակնածելի ըլլալ: Սէն Պէրնար կ'ըսէ. Ընտանեքար վարուող տանուէր մը կ'սնուցանէ անտանելի ծառայ մը: Իտալացիները կ'ըսեն. Տանուէրին ընտանեկանութիւնը յիմարի փեղոյր է. այսինքն յիմարութեան նշան :

La fantaisie fait la loi à la raison. Քիմահանոյք բանականութեան օրէնք կ'դնէ :

Քիմահանոյք (Փանդէղի) բառն երբեմն կ'նշանակէր երեւակայութիւն. այսօր կ'նշանակէ սաստիկ ու եզակի բաղձանք մը որ աւելի քմայքի կամ քիմահանոյքի բնութիւնն ունի: Այս վերջին իմաստովն ոչ նուազ կ'յարմարի առածին քան որչափ առաջին առումով: Փափաքը, երեւակայութեան նման, բարբարոս մ'է որ գրեթէ միշտ ի բաց կ'վանէ բանականութիւնը :

Qui se fache a tort. Ով որ կ'արդողի՝ անիրաւ է :

Մարդիկ ա'ն ատեն միայն նախատինքի կ'դիմեն , երբ օրինա-
նական փաստ ու ապացոյց չունին : Գրաւ կ'դնեմ մէկի դէմ հար-
իւր ան որ անիրաւ ելլայ . պիտի սրդողի : Պրոմէթէոս Արամադ-
դին կ'ըսէ . Լիւսիբենի տրամախօսութեան մէջ . « Դուն շահերդ ձեռք
կ'առնես փոխանակ պատասխանելու , ուրեմն անիրաւ ես » :

Face d'homme porte vertu . կ'ըսուի նաև face d'homme fait
vertu . — Հայերէն յարմարագոյն է ըսել՝ Մարդ երես երեսի գա-
լով կ'ամչնայ , Տաճկերէնը՝ եիւզ եիւզսէն ութանք , կ'ըսեն : Այս
առածաւոր խօսքերը կ'նշանակեն թէ՝ մարդու մը ներկայութիւնը
կ'ծառայէ , այսինքն շատ կ'օգնէ իր գործերու յաջողութեան :

Կ'գործածուի այս առածը մասնաւորապէս ան պարագային երբ
մէկու մը , անձի մը ժամանումը ընկերութեան մը մէջ գէշէն ա-
ղէկի փոխել կուտայ իր մասին , իր ետեւէն խօսուած չարամը-
տական բացատրութիւնները կամ բամբասանքները :

Plus fait douceur que violence . — Մարդ աւելի գործ կ'սեսնէ
անուշելով՝ քան բռնանալով :

Առակ՝ որուն հեղինակը կարելի է ըլլալ Լա Ֆոնդէնը , սակայն
ուրիշ աւելի հին առակ մը կ'ըսէ . Աւելի ճանն կ'բռնուի կաթով
կամ մեղրով՝ քան քացախով :

Ով որ շուտ կամ կանուխ կուտայ կրկին անգամ կուտայ . —
Qui tôt donne , deux fois donne . —

Տառական թարգմանութիւնն է Սենեկայի սա մտածումին .
« Ճշմարիտ բարեկամութեան մը կանոնն է , կ'ըսէ աս Հռովմայեցի
փիլիսոփան , տալ որպէս պիտի ուզէինք ընդունիլ , սրտի հաճու-
թեամբ , անմիջապէս եւ առանց դատամեանքի : Բարերարութիւն
մը ախորժելի կամ հաճելի չէ երբ բարերարը զայն կ'ուշացնէ ,
երկար ատեն իր ձեռքին մէջ կ'պահէ , եւ դժուարութեամբ զայն
ձեռքէն կ'հանէ , եւ իբրեւ թէ զայն ինքնիրենը պիտի խլէր փո-
խանակ տալու » : Մերժումէն յետոյ՝ ոչինչ կայ աւելի կարծր ու
ծանր որքան անառաջադրութիւնը՝ այսինքն տալը բնաւ մտքէն
չանցնելու տրամադրութիւնը կամ բերումը : Այս տեսակ տալ մը
ապահով եղէք թէ երբեք երախտագիտութեան կամ շնորհապար-
տութեան չարժանանար : Բարերարութեան բուն ու յստակ ար-
ժանիքը բարեացակամութիւնն ըլլալով , այնպէս մը հասկցնել թէ
իւր ուշացնելովը չուզելով է որ կուտայ , տալ մը , բարիք մ'ընել
չէ աս , այլ գէշ կերպով պաշտպանել մ'է այն բանը , այն բա-
րիքը որ կ'տրուի :

Տուրքի մը, նուէրի մը շնորհքն ու արժէքը կ'կորսնցնենք երբ զայն կարելի եղածին չափ շուտով ու յօժար սրտով չենք տար: Շնորհ մը, աղէկութիւն մը երբ շատ կ'ուշացնենք, անոր արժէքը կ'ոտրուած, աւրուած է ընդունուած ատեն:

Մի ըսեր քեզմէ բան մը խնդրող բարեկամիդ, «Գնա եւ վերցնի՛ն եկուր, ուզածդ կամ՝ սպիիս՝ վաղը պիտի քեզ տամ, երբ կրնաս զայն տալ նոյնժամայն», կ'ըսէ Սողոմոնի առակը:

«Եթէ դրացւոյդ այսօր ընելիք օգտակար ծառայութիւնդ վաղուա կ'ձգես. գնա՛ ապաշխարհէ», կ'ըսէ Զրադաշտի Զէնտավեստան, հին (մոգապաշտ) Պարսից Ս. Գիրքը:

ԱՐՄԻՆ

Ո՞Վ ՀՆԱՐԵՑ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

ՆՈՒԷՐ՝ ՔՐՈԶՄ՝ ՀՈՒՓՍԻՄԷՐՆ.

(Շարունակութիւն 47րդ թիւէն)

Շուտով այնպիսի բան մը պատահեցաւ որ անոր թէ՛ ստակ եւ խէ պատուաւոր դիրքի մը տուաւ: Այն տեղէն ոչ հեռու ուր ծնած ու մեծցած էր Սթեֆէնսոն, մեծ ածխահանքի մը մէջ փորուած էր խոր հոր մը, որպէս զի ջուրը չլեցնէ, մեծ ջրհան մեքենայ մը՝ դրուած էր, որ ջուրը քաշէ: Բայց այս մեքենան ո՞վ գիտէ ի՞նչ խանգարում էր ունեցեր, որ չէր գործեր: Հանքի կառավարիչները ամբողջ տարի մը կ'ընէին շարժումներ: Հրաւիրած ցին դրացի բոլոր ուսեալ մեքենագործները, բայց ոչինչ կրցած էին ընել: Մեքենան կը սուլէր ու կը հեւար բայց գործ չէր ընէր, իսկ ջուրը հանքին մէջ կ'աւելնար ու կ'աւելնար:

Սթեֆէնսոն երբեմն կը հարցնէր աշխատաւորներուն:

— Ինչպէս են ձեր գործերը. — Այնպէս որ այսօր չէ վաղը պիտի տեսնես՝ ջուրը կը խեղդէ ամենքս. կը պատառխանէին սովորաբար աշխատաւորները:

Սթեֆէնսոն շատ անգամ կը մտածէր այս մասին եւ երբ ազատ ժամանակ մը գտաւ գնաց մեքենան տեսնելու:

— Կրնայի՞ր դուն շինել մեքենան հարցուց անոր ընկերներէն մին:

— Ոչ միայն կրնայի, այլ շաբաթուան մը մէջ կը քաշէի բո-

լոր ջուրը , պատասխանեց Սթեֆէնսոն , Այս բանը անմիջապէս յայտնեցին հանքի գլխաւոր կառավարչին , իսկ նա գիտնալով որ մեքենան բոլորովին աւրուած է եւ ինչ որ ալ ընեն աւելի գէշ չեն ընել , կանչեց իրեն մօտ Սթեֆէնսոնը :

— Ըշմարի՞տ է , որ դուք կարող էք շարաթուան մը մէջ չըտկել մեքենան ու քաշել ամբողջ ջուրը հանքէն , հարցուց Սթեֆոնին :

— Ըշմարիտ է , պատասխանեց Սթեֆէնսոն :

— Ուրեմն շուտով գործի չսկսեցէք , որովհետեւ կրնայ ջուրը մեզ խեղդել : Եթէ դուք գլուխ հանէք այս գործն , որմէ ձեռք քաշեցին բոլոր ուսեալ մեքենագէտները , դուք ո՛չ միայն լաւ կը վարձատրուիք ձեր աշխատութեան համար , այլ եւ համբաւ կը ստանաք :

Այսպէս համաձայնելէ վերջ մեքենան յանձնեցին Սթեֆէնսոնին : Առանց ժամանակ կորսնցնելու գործի սկսաւ ձորձ : Չորս օրուան մէջ քակեց մեքենան , մաքրեց , իւղեց եւ օր մը վերջը բանեցուց : Իրեն աշխատութեան վեցերորդ օրը ամբողջ ջուրը քաշեց հանքէն , այնպէս որ բոլորովին չորցաւ եւ գործաւորները կարող էին իջնել ածուխ փորելու :


Ի հարկէ բոլորն ալ շատ ուրախացան ասոր վրայ : Սթեֆէնսոնին 6 ոսկի վճարեցին , իսկ քիչ ժամանակէն անոր առաջարկեցին գլխաւոր մեքենագէտի պաշտօնը , նոյն հանքին մէջ , տարեկան 55 ոսկի վարձքով եւ ձի մ'ալ տուին տեղէ տեղ երթալու համար : Հիմա Սթեֆէնսոնին կեանքը լաւացաւ , պարտէզով կոկիկ տուն մ'ունէր , մեծ ամսական կը ստանար , բոլորին սիրելի էր և գործը գիտցող մարդ կը համարուէր : Վերջապէս կարող էր իրեն շատոնց փափաքածն իրագործել — իր տղան՝ Ռոպէրթը լաւ դպրոց մը դնել :

Չնայելով այս ամէն յաջողութեան , Սթեֆէնսոն հիմա ալ չը հրաժարեցաւ աշխատելէն : Տղան անոր տեսակ տեսակ գրքեր կը ղրկէր եւ ան կը կարդար : Ատկէ զատ նա այն ժամանակ շատ տեսակ գործիքներ շինեց հանքագործներու ծանր աշխատանքը դիւրացնելու համար եւ վերջապէս մտածեց շոգեկառք մը շինել :

Մինչեւ այդ ժամանակ թէ՛ մարդիկ կը ճանապարհորդէին ձիերով եւ թէ՛ ապրանքները հաղարաւոր մղոն հեռու տեղեր կը փոխադրէին կառքերով ու ձիերով :

Իսկ թէ ի՞նչ կ'արժէ երկար ճանապարհը , թէ՛ մարդոց և թէ՛ ձիերուն համար , ամէնքը գիտեն , եւ թէ ո՛րչափ անյարմար է ծանր բեռնուած սայլերով ճանապարհ երթալ ձմրան եղանակին :

Անիւնները խոր փոսեր կը բանան եւ անձրեւը աւելի կը մեծ-
ցընէ. ձիերը ուժէ կ'իյնան, ձիապանները կը չարչարուին եւ
ապրանքը շատ անգամ ժամանակին տեղը չհասնիր: Թէեւ շատ
տեղեր կը շինեն խճուղիներ, այսինքն քարերով ծածկոնած ճա-
նապարհներ, բայց անոնք անյարմար են, որովհետեւ շուտ շուտ
պէտք է նորոգել քանի որ քարերը սայլերու երթալ գալէն դուրս




Րոպէրթ Սթեֆէնսոն՝ քորդի ձորն Սթեֆէնսոնի

կը ցցուին: Մի քանի տեղեր նոյն իսկ փորձեցին անիւներու հա-
մար փայտէ գծեր դնել, բայց գործը նորէն առաջ չգնաց, որով-
հետեւ այս գիծերը շուտ շուտ կ'աւրուէին եւ ապրանք փոխադ-
րելն առաջուայ պէս սուղ էր: Նա մանաւանդ սուղ էր քարածու-
փոխադրութիւնն: Այս բանիս օգնելու համար շատ խելացի եւ
փորձ մարդիկ կ'աշխատէին մեքենայ մը շինել որ փոխադրէր
սայլերը ձիու տեղ: Մէկը նոյն իսկ շինեց ալ, մեքենան կը քա-

չէր իր ետեւէն մէկ քանի սայլեր , բայց շատ դանդաղ կ'երթար եւ օգուտը քիչ էր :

Բոլոր այս մեքենաներու եւ նոր յարմարցուած գործիքներու մասին լսելէր Սթեֆէնսոն , եւ որովհետեւ ինք արդէն շատոնց լաւ մեքենագէտ մը եղած էր , ինքն ալ մտածեց շոգեկառք մը շինել , այսինքն մեքենայ մը , որ շոգին արագ շարժէր եւ կարողանար մեծ ծանրութիւն քաշել : Յայտնի է որ տաքութենէն ջուրը շոգի կը դառնայ եւ եթէ ջրով լեցուած կաթսայ մը գոցենք խու-



Բոպերթ Սթեֆէնսոնի շինած շոգեկառքը ամլամ ղԶ

փով մը , երբոր ջուրը շատ եռայ , շոգին խուփը չկը կը փերցնէ : Ոսոր ալ պատճառն է , ջրի շոգի կազմուածքը փոխանակուելէն աւելի ընդարձակօրէն , որ չի պարունակուելու դրամանէն : Այնպէս զուրա կը պոռթկայ : Եթէ եւելօք շոգի արագութեամբ շարժուի է մեծ ծանրութիւններ բարձրացնել եւ բաւական քանակով շարժուի :

Ահա՛ Սթեֆէնսոն ալ այս հիման վրայ մեքենայ շինեց : Եւ ինչպէս շինեց , որու մէջի ջուրը կարողանար շարժուիլ : Եւ յարմարացուած անիւները : Շատ ստակ պէտք մէջ մտաւ : Եւ այդպէս ինչպէս մեքենայ մը շինելու մամար , բայց Սթեֆէնսոն մէջը այդ դրամանակ օգնութիւն ստացաւ : միջոցով ղվ խմբամիջոցս ղոպիս իոպիս

Բարածուխի հանքի տէրերէն մէկն անոր ստակ առաջարկեց շոգեկառք մը շինելու համար եւ ասկից զատ անոր նուէր մը խոտացաւ։ Սթեֆէնսոն ի հարկէ շատ ուրախ էր այս բանիս համար։ Նա գործաւորներ վարձեց եւ անմիջապէս գործի սկսաւ։

Ինչ աշխատանք ու հոգ չէր պահանջէր գործն։ Այն ատենները Հիմակուան պէս գործարաններ չկային, ուր կը պատրաստուին շոգեկառքի այս ու այն մասերն։ Աշխատիլ ստիպուած էին ամենագէշ գործիքներով։ շատ անգամ ալ կ'ստիպուէր ինքը պատրաստել պէտք եղած գործիքը։ Բայց չնայելով այս ամէնին Սթեֆէնսոն չէր վհատեր, որովհետեւ տղայութենէն ի վեր վարժուեր էր աշխատութեան ու միայն իր ոյժերուն վրայ յոյս կը դնէր։ Եւ ահա տասն ամէն շոգեկառքը պատրաստ էր։ Ճշմարիտ է որ ան դեռ այնչափ արագ չէր աշխատեր, ինչպէս հիմա եւ շոգին դուրս կ'ելնէր սաստիկ աղմուկով։ Եւստիւսով, բայց այդ ալ շատ լաւ էր, որովհետեւ այդ մեքենան բարեփոխելն շատ աւելի դիւրին էր քան թէ նորն հնարելը։ Սթեֆէնսոն շատ գոհ էր իր մեքենայէն։ Ան կը տեսնէր, որ իր աշխատանքն ու գիտութիւնը պարապը չանցան, հաշիւները ճիշդ էին։

Բայց ուրիշները գրեթէ ուշադրութիւն չդարձուցին այս, կարելի է ըսել մեծ գիւտին վրայ եւ առաջուան պէս բեռները ձիով կը փոխադրէին։

Շար.

Թարգմ. Ռուսեր. ԱՆՏԱՐԿԱՊԵՏԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Ձը նախանձիցն բնաւ անոնց՝ որոնք աւելի հարուստ են մեկն։

Բացորոշ է թէ մարդոց սիրտը ու հոգին փափաք մը, հակում մ'ունի բարիին, լաւին եւ գերազանցող վիճակներուն։ Եւ կը փափաքի տիրանալ անոնց։

Գեղեցիկ ու օգտակար է այս զգացումն ու միտումը։ Եռանդը ու ջանքը կը կրկնապատկեն կ'առաջնորդեն դէպ անոնք։ Ի՞նչպէս ըսեմ անկարելի, բայց գէթ դժուարին է։ Պէտք չէ՝ աճապարել, այլ յարատեւել պատուաբեր ճիգերով։ «Յաջողութեան ճամբան» սպասել գիտնալն է՝ կ'ըսէ առած մը։ Այս օրէնքին դէմ գործողը, անշուշտ պիտի դիմէ՝ ապօրինի միջոցներու, եւ այսպիսով պիտի ստորնացնէ իր ներքին մարդը։

Փայլուն վիճակներու համար բաղձանքին անիրականացումը շատ վիշտ կը պատճառէ զայն սնուցանողին, այս առթիւ կը փութամ ըսելու թէ առանց փուշի վարդ չբլւար:

Պէտք քէ սին փափաքներ տածել, որ այս աշխարհի մէջ վերջ չեն գտներ:

Ժիւսթէնի պատմութեան Բ. մասը շատ լաւ պիտի պարզէ ինչ որ հասկցնել պիտի ուզեմ:

Ուրիշ օր մը, քիչ մը աւելի մեծցա՞ծ: Ժիւսթէն բաւական երկար ժամեր աշխատած էր իր հօր արտերունք մէջ: Խիստ յոգնած նստած էր ակօթի մը մէջ. կը խորհէր իրենց վիճակներուն վրայ եւ կ'ըսէր. ի՞նչ երջանիկ են հարուստները եւ մենք ո՞րքան դժբաղդ: Կը դառնանար իր սիրտը, զուգադիպութիւնը այնպէս բերաւ որ հարուստ մարդու մը կառքը անցնի անկէ, որուն մէջ Ժիւսթէնի հասակակից գեռատի մանչ մը նստած էր իր հօր քով թաքիչէ քարձերուօ վրայ:

— «Ի՞նչ երջանիկ տղայ, մտածեց Ժիւսթէն եւ ի՞նչքան թշուա՞ռ եմ ես:» Իսկոյն յիշեց նժարը, ուզեց անոր դատաստանին դիմել, առաւ սքանչելի կշիռը, իր անոնքը դրաւ միւս նըժարին մէջ, եւ ահաւասիկ փոխուեցաւ հարուստ տղուն հետ, որուն բախեբաղդութիւնը, իրեն նախանձը շարժած էր: Նա ուրախ զուարթ նստած է կառքին խորը որուն առոյգ ձիերը արշաւանքով կը տանէին: Ահա հասաւ իր բաղձացած վիճակին. սակայն գիտնալ պէտք է թէ շատ շուտ պիտի զգուի, եւ ինչպէս արդէն զգուած է այս նոր երեւոյթէն: Նա յոգնած է անշարժ ըլլալէ թաւշեայ բարձերուն վրայ, իր ձեռները բանտարկուած՝ ծոցերուն մէջ անհամբեր գործել կ'ուզեն եւ աւելի եւս զգուեցաւ երբ զգաց թէ անիկա էր միայն իր զուարճութիւնը ու պտոյտը: Ի՞նչքան տխուր եղանակ զուարճանալու: Եւ սկսաւ նախանձիլ մշակներու տղոցը երբ կը հանդիպէր անոնց իր ճամբուն երկայնութեանը, կը նախանձի անոնց երբ կը տեսնէ երգելով արեգակին տակ նստիլը, բարձր խոտերուն վրայ՝ առանց վախճալու թէ կը ճմռթկի իրենց գեղջկական պարզ զգեստները: Ու,

— «Ո՛հ, ո՛հ ըսաւ Ժիւսթէն, վերստին բռնենք մեր տեղը, չպիտի ուզէի բնաւ փոխել վիճակս անոր հետ:» Եւ նա դարձեալ դրաւ ծանրոցը իր նժարին մէջ, եւ համոզուած ու գոհ իր վիճակէն վերստին ձեռնարկեց աշխատիլ հոն:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՄՐՑՈՒՄԸ

Հանրագիտակի վերջին մրցումին 17 մրցողներ եղան. որոց մեջէն վեց հասր միայն կարողացան լաւ կերպով նկարագրել Սեխը գողցող տղուն հոգեկան եւ բարոյական վիճակը: Ասոնց առաջինին (Շաման-բաղ) գրութիւնը կը հրատարակենք ներկայ թիւին մէջ, իսկ երկրորդը յաջորդ թիւով:

Երկրորդն է՝ Նիսաւրի Սուրենեան վարժարանի աւակերտներէն Պր. Մարկոս Յ. Տեփմեան. — Երրորդ՝ Խարբերդի Եփրատ Գօլէնի ուսանողներէն Պ. Նուրիման Մ. Մովսէսեան. — Զորրորդ՝ Ամասիաէն՝ Պր. Կ. Գ. Պէնլեան. — Հինգերորդ՝ Ամասիոյ Ս. Նեսա. վարժար. առ. Պր. Արմենակ Եղիազարեան. — Վեցերորդ՝ Ամասիոյ Իբրանուսեան վրժ. առ. Պր. Գրիգոր Յ. Գալուսեան:

Մեր խոստման համեմատ՝ առաջին հանդիսացողին կը նուիրենք մէկ տարեկան Հանրագիտակ, իսկ երկրորդին՝ 1904 տարւոյ Տարեցոյց մը:

Ս Ե՛ Խ՝ Թ Է 2 Ե Խ

Տղեկ մը խեղճ, անոք, երբ կը թափառէր ասդին անդին դաշտերուն մէջ, տեսաւ բանջարանոց մը, ուր բուսած էին զանազան ընդեղէններ: Ոմանք կը ցուցնէին իրենց սերմնարաններն տնկուած ճիւղերու վրայ բարձրացած զերդ գալարուն. ուրմանց տերեւներուն մէջէն կարծես իրենք զիրենք շօղելու կերպով, կ'երեւնային կարմիր կարմիր ոսկեխնձորներն (լոլիկ). տեղ մը չերտաւոր խայտուցներով գնդիկներ, որք կը ցուցնէին թէ ձմերուկներ էին. ուրիշ տեղ մը հաւկթածեւ գնդիկներ, ակօս ակօս բաժնուած, սեխ ըլլալ կը թուէին, եւ բոլոր բանջարանոցին շուրջ եզերուած էր երկարածիգ ցօղուններով խոշոր խոշոր դեղումներ: Վերջապէս դիտողին աչքը զմայլեցնող գեղեցիկ տեսարան մ'էին կազմած այս այլազգի ընդեղէնք՝ փայտէ ցանկով մը շրջապատուած:

Մանչուկն երբ աղէկ մը աչքէ անցուց այս ամէնը, քիչ մը հեռուն կեցած, շատ փափաքեցաւ սեխ մը ուտել: Անդին արտին մէկ անկիւնը ծառ մը կար, որուն զով ստուերին տակ նստած մէկը պահապան ըլլալ կը թուէր:

Հազիւ քանի մը ըրալէ եղաւ տղեկին շրջահայեցութիւն, խորհուրդ մը շանթի արագութեամբ փայլատակեց մտքին մէջ — սեխ մը գողնալ եւ ուտել — բաւական կնճռոտ խորհուրդ մը:

Մանչուկն նստաւ ծալապատիկ ու սկսաւ մտածել: Դուրսէն

դիտող մը կը գուշակէր թէ տղան արտակարգ երեւոյթ մը ունէր : Իրբ կը խորհէր սոյն խնդրոյն վրայ երեկակայութեան վերին խաւերուն մէջ երկրասլաց սաւառներով : Դէմքին վրայ՝ յաջողելու յուսով փոխառնեալ երեւոյթ մը շինած, այս գեղեցիկ վիճակին մէջ ներքին յանկարծական յեղաշրջում մը ունեցաւ :

Բարին ու չարը զանազանելու գիտակցութիւնը — խիղճը — ինքզինքն ցոյց տուաւ այդ խորհուրդը երկնող մարդկային մեղաց բնութեան հանդէպ : Զեռքը ծնօտին ու ծունգին վրայ յենած քիչ մը առաջուան աչաց արագ արագ թարթումներուն հետ ժպտով յափրացած մանչուն գունափոխութիւն մը կրեց իր դէմքին վրայ :

Այժմ սկսեց պայքար մը, փոթորիկ մը, առաւել անոր սրտին մէջ քան թէ մտքին, որովհետեւ սրտի խնդիր մ'է :

Պայքարն իրական էր եւ բուռն : Տղան սկսած էր նեղուիլ սրտատանջութենէն : Հիմա ի՞նչ ընել պէտք էր . յաղթել թէ յաթուիլ փորձութենէն : Բաւական խրթին պարագայ մ'էր . երբեմն սարսուռ մը կը պարէր իր ամբողջ կազմուածքը, մերթ շրջահայեցութիւն մը կը ձգէր դէպի հեռուները . մերթ իր ակնարկներն կ'ուղղուէին դէպի սեխաստանը . մերթ կը կանգնէր, մերթ կը նստէր շուարած դանդաղութեամբ մը, կարծես հեռացնել կ'ուզէր իր այդ խորհուրդը, բայց զօրութիւն մը զոգցես կը քաշէր գինքը, հրապոյրն ուժգին էր . այս վիճակին մէջ երբեմն երբեմն թեթեւ հառաջներ ալ կ'արձակուէին ընդհատ ընդհատ . նշան սրբանեղութեան :

Իր միտքն անկարող կ'ըլլար այս բանին վճիռ մը տալ եւ որուն կարծես օգնութեան կը հասնէին չրթներն թեթեւ շարժումներով ու մրմունջներով՝ վախճան մը տալու այս սրտնեղութեան :

Առանձին էր, բայց մէկը, աներեւոյթ մէկը, պայքար կը մղէր իրեն հետ սեխն ալ միւս կողմէն կենդանի էակի մը հանգոյն զօրութիւն մ'ունէր իր մէջ, կարծես սատանան հոն ամփոփուած էր տղան մոլորցնելու համար :

Սեխին գոյութիւնն իրական էր իր աչաց առջեւ, բայց աներեւոյթ զօրութեան դոյութեանը հանդէպ ցուրտ կասկած մը ներշնչեց տարտամ որոշմամբ մը թէ « գաղափար էր » : Այս տարտամ որոշումը քանի մը ընկալէ խղճին դիմադրելէն յետոյ հաստատապէս վճռեց թէ չկայ բան մը ու այսպէսով իր պզտիկ սիրտը մեծ որոշումը տուաւ : Աստուածային ազդարարութեան « Մի՛ գողանար » ին հակառակ « կը գողանամ » : Խիղճն այլ եւս իր ուժգին ձայնը նուազեցուց . այլ եւս յոգնեցաւ կարծես, սրտի եւ մտքի վայրկեական խաղաղութիւն մը տիրեց դարձեալ : Իրաւ

ալ չէր զգար առջի յուզումը, տագնապը. այն խռովութիւնները հիմա լոկ սրտի տրոփ մ'էր դարձած, բայց օրտակարգ տրոփ մը, որովհետեւ երբեմն անոր ձայնը իր ականջով լսել կը թուէին: Յանկարծական ոստում մը կ'ընէ, դայն ալ վտարելու համար, եւ կը պատրաստուի սեխ մը գողնալ, բաւական խոշոր սեխ մը, որ ածուին մէջէն որոշած էին իր աչերն:

Առաջին եւ մեծ փորձութիւնն անցաւ, բայց յաղթուած էր, հետեւապէս յաջորդներէն աւելի հեշտին պիտի յաղթուէր. աւելի երեւորթական հանդարտութեամբ մը պիտի կատարէր իր գործը, այժմ խիղճն ըմբ քարշ կ'երթայ մարդկային մեղուից բնութեան ետեւէն. յաղթուած է ան, ո՛հ: Սրտի այն զօրաւոր բաբախումներն որ կարծես այս անգամ Աստուած է որ իր աներեւոյթ, նուրբ եւ փափուկ ձեռներով կը հարուածէ, չուզէր լսած ըլլալ, ո՛հ, այս է մարդ բնութիւնը, աւա՛ղ, մարդկային տկարութիւն:

Գանկին տակէն օձասողիկ մտաւ սեխանոցը, կտրեց որոշածը և սկսաւ խոշոր խոշոր քայլերով յառաջանալ: Երբեմն իր աչերն դարձնելով դէպ ի պահապանն, որ զբաղած էր: Ամբողջ հոգին կը սարսուէր, սիրտը կը տրոփէր ուժգնակի, բոլոր էութեամբ և կազմուածքով կը դողդղար, գլխուն գագաթէն մինչեւ ոտից թաթերը ելեքրական ջղաճգութիւն մը կը զգար, իր քայլերն որոշ ուղղութիւն մը չէին առնէր. այս բոլոր փորձանաց հետ սեխն ալ ուրիշ բեռ մ'էր պատիժ մ'էր կարծես Աստուածուստ սուհալ այդ անձուկ հոգւոյ խռոջքին տաժանելի վայրկեաններուն մէջ: պահապանին պօռալուն սպասող հետաքրքրութեամբ մը:

Սեխ մ'ըլլալէ աւելի չեխ մ'էր, իր յանցանաց բնական պատիժ մը:

Երբ այլ եւս ցանկէն պիտի անցներ՝ դեռ ոտքին մին ցանկին վրայ, իսկ միւսոյն մատներն այս կողմն հագիւ գետին հասած վիճակին մէջ, պահապանը շշուկ մը լսելով գլուխը վեր կ'առնէ ու կը տեսնէ չարածճին, կը վազէ գտւազանը ձեռքը:

Տղան սարսափահար ճի մը արձակելով, աչքերը խոշոր խոշոր բացած սեխը կը ձգէ ու կը փախչի վախէն այժեամի պէս: Այս միջոցին երբեմն երբեմն կը դառնար ու ետին կը նայէր: Նոյն ատեն բուռն ածապարանքէն ոտքերը կը զարնուէին քարերու:

Երբ պահապանը մինչեւ ցանկապատը հասաւ, ինքն արգէն աներեւութացած էր եւ. դէպի պահապանին աջ կողմը դարձած:

Պահապանն եկաւ անէծքի բաժին մը հանելով բերնէն, տեսաւ որ սեխը երկու կտոր եղած էր, թողուց դայն ու գնաց:

Տղուն թոքերն ուռած՝ պայթելու մօտեցած էին շնչահատ սրտի արագ բաղխումներով մէկտեղ, եւ սկաւ դարձեալ կամաց կամաց դէպի սեխը յառաջանալ:

Այժմ մարմինն իր արժանիքը կորսնցուցած է հոգւոյն, ուրեմն ի՞նչ արժանաւորութիւն կրնայ փնտռուիլ այդ սեխն ուտելու. ուտէ կամ չուտէ՝ խղճի խայթ մը, կրծող որդ մ'եղաւ ներսը:

Յուդայի չարաշահութեան համար տրուած վարձքին — արծաթին — կը նմանի այդ սեխը: Յուդայ վերջէն զայն վերադարձուց. մանչն ալ քանի մը պատառ կը լափէ իր խռովայոյզ սրտին դեղթափ մը եւ խղճին հանդարտութիւն մը ըլլալու համար, բայց կարելի՞ բան է, իր սրտի առջի անդորրութիւնն ստանալ:

Կիւրին

ՇԱՄԱՆԹԱ Դ

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԳՐՊԱՆ ԴՐԻՈՂ ՎԱՌԱՐԱՆ ՄԸ

Մեծ ցուրտերուն հաճելի բան է անկողինը առաջուրնէ տաք-ցընել եւ կամ պզտիկ ճամբորդութիւն մը կատարած ժամանակ գրպանին մէջ ունենալ անանկ առարկայ մը ու՛ր ձեռքերը եւ քիչ մըն ալ ամբողջ մարմինը տաքցնէ: Մեր տուններուն մէջ փաթթուած տաք աղիւսներ կը գործածեն, հիւանդներու անկողինը տաքցնելու համար. եւրոպացիները տաք ջուր յեցուած գոց շիշեր կը դնեն վերմակին տակ: Սակայն այս միջոցները անբաւական են. հազիւ թէ պահ մը ասեն կրնան իրենց տաքութիւնը պահել եւ անկէ վերջն աւելորդ բեռ մը կ'ըլլան:

Դիտուած է որ երբ մարմին մը հաստատուն վիճակէն հեղուկի փոխուի, զինքը շրջապատող առարկաներէն ու մթնոլորտէն մաս մը ջերմութիւն կը ծծէ ու իր մէջ կը պահէ: Փոխադարձաբար նոյն մարմինը հեղուկ վիճակէն բիւրեղանալով, երբոր հաստատուն կ'ըլլայ, առաջուան ծծած ու մթերած տաքութիւնը ամբողջովին դուրս կ'արձակէ: Այս տաքութեան կ'ըսեն քաֆուց ջերմութիւն: Բնականաբար բոլոր մարմինները նոյն աստիճանով չէ որ պէտք ունին ջերմութեան հեղուկ դառնալու համար. կան անանկ մարմիններ որոց թաքուն ջերմութիւնը գրեթէ անզգալի է:

մինչդեռ ուրիշներ կան որոնք թէ մեծ քանակութեամբ ջերմութիւն կ'աւարեն եւ թէ պաղել սկսելէ վերջ երկար ժամանակ ջերմութիւն դուրս կուտան։ Ասոնցմէ առաջինն է պարիթր։

Առնենք մետաղէ աման մը ջրոտեալ պարիթով լեցուն և որու չորս կողմը կատարեալ կերպով գոցուած է, ընկղմենք զայն եռացած ջուրի մէջ։ Ժամանակ մը ետքը, որ կախում ունի պարիթը պարունակող ամանին մեծութենէն, պարիթը կը հալի ամբողջովին ծծելով ու իր մէջ մթերելով մաս մը ջերմութիւն։ Այլ ատկէ վերջը այդ ամանը ջերմութեան շտեմարան մըն է, որ հազարումէկ պէտքերու կրնայ գործածուիլ։ Օրինակի համար թղթապանակի ձեւով տուփ մը շինեցէք. առաջուուն քառորդ ժամ մը եռացած ջուրի մէջ ձգելէ ետքը չորցուցէք ու գրպաննիդ դրէք։ մինչեւ իրիկուն մարմիննիդ տաք կը մնայ, եւ իրիկուան տուն դառնալէն ետքը կրնաք զայն անկողիննուդ մէջտեղը գետեղել, վստահ ըլլալով որ տաք վերմակ մը պիտի գտնէք պառկած տետեննիդ։

2. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ս Ո Ւ Բ Ռ Ա Մ Ա Ն Ի

Ծերուկ փիղ մը Սուրբաւանի անունով, ամէն տեղ գետեղերքները, անտառը, մաժուրին տղոց կ'ընկերանար։ Փոքրիկ խումբը երբեմն օրերով բացակայ կը գտնուէր. անա'նկ որ՝ բնաւ մէկն հոգ մը չէր ըներ իրենց նկատմամբ. միմիայն բաւական էր ծերուկին պահպանութեան ներքեւ ըլլալը գիտցուէր։

Առտու մը տղաքներուն անդրանիկը կը փնտռէի գիրք մը յանձնելու համար։

— Ո՞ւր են ձեր տղաքը, հարցուցի։

— Սուրբաւանի զանոնք ձկնորսութեան տարաւ, պատասխանեց ինծի հայրը։

— Ձկնորսութեա՞ն մի, յարեցի զարմացումով։

— Եւ եթէ կը հաճիք, միասին երթանք, շարունակեց մաժուրը, գետին երկայնքէն քանի մը վայրկեանէն կրնանք հասնիլ, եւ իրենց զբաղումներուն ականատես ըլլալ։

Բարեկամիս առաջարկն ընդունեցայ, ու արդարեւ, քիչ ժամանակէն զանոնք գետեղըը նստած տեսանք. պզտիկ խումբը՝ սովորականին պէս անվրդով, անդորր, լռիկ ու մնջիկ, ջուրին եզերքը նստած էր։

Մօտեցանք, մանուկներուն իւրաքանչիւրն՝ կարթը ձեռքը՝ իր տեղը կեցած ամէն վայրկեան անձկանքով կարթին ծայրը կը նայէր եւ կը յուսար գտնել կարեւոր որս մը։ Ծերունի Սուբուսանիի պատիճին ծայրը կար խոշոր պամպու եղէգ մը, ու անշարժ կեցած էր կրանիտէ ժայռի մը պէս, ձկնորսներու այս խումբին մէջ համբերութեամբ ինք ալ իր դերը կատարելով։


Ինչպէս կը տեսնուի, տղաքներուն ուշադրութիւն չէի ըներ՝ մի միայն կենդանիով զբաղելու համար, եւ այնքա՛ն հետքքիւր էի որ, չէի ուզեր անցած դարձածներէն բան մը կորսնցնել։ Սպասումս երկար չէր կրնար ըլլալ։ Հազիւ երկու վայրկեան կար որ հասած էինք, Սուբուսանիին կարթը սկսաւ երերալ, կենդանին երբեք տեղէն չշարժեցաւ։ Իր եռանդոտ աչքերը ցանկութեամբ կը հետեւին ամէն վայրկեան կարթասունկին ծփալուն։ Կատեհ առիթի մը կը սպասէր։ Արդարեւ, կարթը յանկարծ ջուրին մէջ ընկղմելու պէս եղած ատենը՝ Սուբուսանիի գայն վերցուցած էր՝ ամենավարպետ ձկնորսի մը ճարպիկութեամբ։ Կարթին ծայրը սքանչելի տինկայ մը կ'օրօրուէր, այնքա՛ն համեղ ճաշակելու համար։ Երբոր Սուբուսանի նշմարեց որսը զոր կը շահէր, ի նշան ուրախութեան, անմիջապէս արձակեց մէկը այն խոնջիւններէն որ բաւական կը նմանի աւազփողի կիտանիչ խազերուն, որուն վարժուած է ինք, եւ սպասեց որ մաժորին անդրանիկ տղան գայ կարթալարին վրայէն գայն հանելու ու նորէն խանձատելու գայն։ Չարաճճի տղեկ մըն էր ան, եւ ուր յաճախ չըջաններ կ'ընէր իր մեծ ու ծերուկ ընկերոջը բոլորտիքը։ Մեր ներկայութենէն օգտուեցաւ մեզի ակնատես ընելու զուարճալի տեսարանի մը։ Ճուկը վերցնելէն ետքը, զոր ձգեց ջրալից կարասի մը մէջ, հանդարտութեամբ իր տեղը վերադարձաւ, առանց Սուբուսանիի կարթին խայծ դնելու։ Խելացի կենդանին բնաւ չփորձեց իր կարթը գետին մէջ նետել, ու կոչելու աղաղակներ արձակեց։ Ծիգերը՝ զորս կ'ընէր ձայնին մեղմ շեշտեր տալու համար, դիտելէ եզական բան չկար։ Բոլոր թռչուններն այդ ձայնին համար տերեւակոյտը կը ձգէին կ'երթային։ Տղան կը ժպտէր չարաճճիօրէն ու տեղէն չէր երերար։ Սուբուսանի անոր քով գնաց ու իր պատիճովը փորձեց մեղմօրէն գանի հրել կերերու տուփին քովէն։ Երբ տեսաւ որ ինչ որ կ'ընէր չ'էր կրնար բարեկամին սիրտը կակղել, ետին դարձաւ մէկէն ի մէկ յանկարծական գաղափարէ մը մտահարածի պէս, եւ իր պատիճով բռնելով պահարանը որ ձճիներ ու միջտաներ կը պարունակէր, մաժորին առջև դրաւ, յետոյ, ետին դառնալով՝ ժողվեց կարթն ու տիրոջը յանձնեց գայն։

— Ի՞նչ կ'ուզես ինէ, ծերո՛ւկ Սուրբամանիս, ըսաւ բարեկամս: Իսկոյն կենդանին սկսաւ ոտքը գետինը զարնել ու իր ամէնէն քաղցրահնչիւն շեշտերը լսեցնել նորէն: Ուզելով տեսնել թէ մինչեւ ո՛ւր պիտի երթար գործը, տղին կողմը անցայ, եւ տուփն առնելով սկսայ փախչիլ: Պատիժը չուշացաւ. փիղը, գրգռուած, իր պատիճը գետին մէջ սուզեց ու ջուրի սիւն մը ցայտեցուց իմ վրաս, հրէջջի արագութեամբ եւ ոյժով: Մածորը զանի կեցուց նշանով մը, եւ, հաշտուելու համար մտացի կենդանիին հետ, իմ իսկ ձեռքովս խայծն անցուցի կարթին: Ուրախութենէն դողալով մանկիկի մը պէս սրուն կը վերադարձնէին իր խաղալիքը. Սուրբամանի հազիւ ժամանակ ունեցաւ ինծի շնորհակալ ըլլալու, շնորհելով իր ամէնէն փափուկ խաղը, եւ վազեց իր տեղն հաստատուեցաւ գետեզրին վրայ,

Թարգմ. ԱՐԲԱԿ

ԼՈՒԻ ԺԱԳՈՒԻՅՕ

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ



Սոյն պատկերը զարմանալի վարժութիւն մը կը ներկայացնէ, զոր դպրոցականները կարող են փորձել եւ որ բոլորովին օտար չէ բնագիտութեան սկզբունքներուն:

Փորձ մ'է սա որ մարդ մը եօթը մատներով վերցնելու մէջ կը կայանայ, երկու հոգի իրենց ցուցամատներն վեր հանել ուզած անձերնուն կօշիկին ներքեւ կը դնեն, երկու ուրիշներ իրենց աջ ձեռքին մատները վերոյիշեալին իւրաքանչիւր արմուկին ներքեւ կը դնեն, հինգերորդ անձ մ'ալ իր ցուցամատը վերջնոյն կզակին ներքեւ կը դնէ:

Մէկ, երկու, երեք հրամայուելուն՝ իւրաքանչիւր ոք զօրեղ ճիգ մը կ'ընէ վարէն դէպի վեր: Իսկոյն անձը որուն վրայ այս փորձը տեղի կ'ունենայ, զարմանալի դիւրութեամբ մը վեր կելլէ:

Սոյն արդիւնքը յիշուի զարմանք կը պատճառէ, բայց երբ քիչ մը մտածենք, պիտի տեսնենք թէ՝ ուրիշ բան չէ աս, այլ ծանրութեան հաւասարապէս բաժանման մէկ պարզ օրինակն:

Մարդ մը միջին հաշուով 70 քիլօկրամ կը կշռէ, ուրեմն իւրաքանչիւր մատ 10 քիլօկրամ միայն բեռ կը վերցնէ, ինչ որ տարօրինակ բան մը չընծայեր: Փորձելը շատ դիւրին է եւ տեսնողներու զուարթութիւնը գրգռելու առաւելութիւնն ունի:

ԵՐԵՔ ՆԱՐՏԵՐԸ (գար)

Սեղանին վրայ դրէք իրարմէ քիչ հեռի երկու գիրքեր եւ ստոնց վրայ հաստատեցէք ապակի մը. ապակիին տակը դրէք թեթեւ մարմիններ, ինչպէս թուղթի մանր կտորուանք, փետուրի թելիկներ, թանթրուէնիի (միւրվէր) միջուկէ պզտիկ գնդիկներ, եւ այլն: Առէ՛ք բուրդէ լաթ մը եւ կրակի վրայ լաւ մը չորցնելէ յետոյ՝ ապակին շփեցէ՛ք. Այս վերջինը կ'ելեքտրականայ եւ տակը գտնուած մարմինները վեր ցատկելով՝ անոր կը զարնուին, վար կ'իյնան, նորէն վեր կ'ելլեն, այսպէս շարունակաբար զարմանալի տեսարան մը կ'ընծայեն:

Ասիկա գիտէք արդէն, հիմա նոր բան մը ըսեմ:

Թանթրուէնիի ճիւղի մը միջուկէ երեք հատ պզտիկ քառակուսիներ շինեցէ՛ք եւ երեսներուն վրայ մեկանով կէտեր նշանակեցէ՛ք նարտի խորանարդներու նմանցնելու համար: Յետոյ դրէ՛ք ապակիով ծածկուած տուփի մը մէջ:

Երբ բուրդէ լաթով շփէ՛ք ապակին, երեք խորանարդները վեր կը ցատքեն եւ ապակիին կը փակչին. եթէ անոնց վրայ դրած մեկանի կէտերը կանոնաւոր կերպով եղած է, կրնաք նոր տեսակ նարտի խաղ սեպել ասիկա, քանի որ ապակիին փակած երեսնե-

րուն թիւերը փոփոխական կ'ըլլան: Բայց աւելի զուարճալին կայ: Խնդրեցէք ձեր բարեկամներէն մէկէն որ ապակիին փակած թիւերը գումարէ. դուք բնաւ տուփին մի՛ դպիք. բայց քանի մը երկվայրկեան ետքը ըսէք ձեր հաշուակալին թէ՛ սխալ է ըրած գումարն: Օրինակի համար, 6,4 եւ 2 թիւերուն տեղ, որոնք 12 կուտան, պիտի ունեւաք 13 եւ 4. որ 8 կ'ընէ: Քիչ մը ետքը թիւերը նորէն կը փոխուին, առանց մէկը տուփին դաշելու, եւ ասիկա բաւական ժամանակ կը տեսէ:

Ահա՛ թէ ինչպէս կ'ըլլայ Խորանարդին ապակիին կաած երեսը կամաց կամաց կը զատուի անկէ՝ բայց եզերքը քիչ մ'աւելի ժամանակ փակած կը մնայ ապակիին. այն առեւ խորանարդին միւս երեսը կը քաշուի ելեքտրացած ապակիէն եւ անիկա կը փակչի ապակիին. այս ալ կամաց կամաց կը զատուի եւ իրեն կը յաջորդէ ուրիշ երես մը, եւ այսպէս շարունակաբար՝ մինչեւ որ ապակիին ելեքտրականութիւնը կորսուի:

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանքագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը խնդրենք որ բաժանորդագիրներէ և յանձնարարութիւններէ մընացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ տարւոյն 11 ամիսը լրանալէն վերջը՝ դեռ չատ տեղեր սոյնօրինակ հաշիւներ անվճար կը մնան:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱՊԵՏ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅՄԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՄԷՆԷՆ Ժողովրդական, ԱՄԷՆԷՆ Զուարճալի

ԵՒ

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԸ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Քօնսերը. — Ագախութիւն. — Պարտաւորեալ ինր տարի առաջ (Բանագող Լուսինեան). — Հազարումէկ կերպիւր ժամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխոհեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ուկերմս եւ կայծակը. — Քսան եւ ... դարու հաշ աը. — Կրօններու պատմութիւնը. — Այծեամի որսը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու տեղ. — Նշանաւոր միականիներ. — Մխիթարական բուրբ յոռեանս բարեկամիս (Քասիմ). — Նրկրագործական Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Ցաւին դարմանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչքերու առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը գանոդ պարունը. — Տոմարկնիդ, պարունայք. — Հինգ առ հարիւր տակու. — Նամակադրոշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթօ. — Գորնիշոնի երազը. — Մեղրալուսնի համբորդութիւն. — Մայր ու տղայ. — ԱԿՆՅԻ ՍԱՐԱՆ ՄԸ. — Դիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասենին. — Քսան բարայոյ աշխարհիս ոսկին. — ԹԻՐՏԱԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒՍԱՐՃԱԼԻՔՆԵՐ եւայլն, եւայլն.

Գինն է 5 Դանեկան. — Գաւառները՝ քրքասարով 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի մենէ հինգ հաս գնողներուն վեցերորդ մը հուէր կը տուի

